ԿԱՐԾԻՔ

Լիլիթ Հրանտի Ամիրջանյանի «Մատենական գեղանկարչության ուսուցման մեթոդիկան գեղարվեստական կրթօջախներում» խորագրով ատենախոսության մասին՝ ներկայացված մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար՝ ԺԳ.00.02- «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (կերպարվեստ) մասնագիտությամբ:

Ժամանակակից կրթության մարդասիրական միտվածության ու ժողովրդավարացման պայմաններում առանձնահատուկ արդիականություն է ստանում աճող սերնդի գեղագիտական դաստիարակության և գեղարվեստական կրթության խնդիրը: Այս տեսանկյունից Լիլիթ Ամիրջանյանի ատենախոսությունը արդիական, խոլ.հիմն հետազոտություն է, որում մենագրորեն լուծում է տրվում սովորողների գեղարվեստական կրթությանը՝ հայկական մատենական գեղանկարչության միջոցներով:

Կարծիքի ներկայացված սույն ատենախոսությունը գրված է տրամաբանորեն նախամտածված ծրագրի համապատասխան և ներառում է հասարակական-մշակութային կարևոր նշանակություն ունեցող կարևոր գիտական հիմնահարցի երկ.ւրատև ուսումնասիրություն և մշակում: Հետազոտությունն անցկացվել է 7 տարվա ընթացքում (2016-2023 թթ.) ամրագրելով հեղինակի՝ այդ բնագավառում ունեցած տևական աշխատանքային փորձը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 2 գլուխներից, որոնք ընդգրկված են 6 ենթագլուխներում, եզրակացությունից, մատենագիտական ցանկից և հավելվածից:

Ատենախոսը հստակ որոշարկում է հիմնախնդիրը, գիտական ենթադրությունը, առաջադրած խնդիրները, հետազոտության առարկան և օբյեկտը: Հանգամանորեն մշակված է տեսաբանական և փորձարարական հետազոտության մեթոդիկան: Մասնավորապես հետազոտության մեթոդների՝ նրա կիրառած համակարգը թույլ է տալիս խորությամբ և հանգամանորեն լուծել առաջադրված բոլոր խնդիրները:

Հետազոտության մեթոդների համակարգը ներառում է.

- Փիլիսոփայության, հոգեբանության, մանկավարժության, արվեստի իմացության առնչությամբ մեթոդական գրականության ուսումնասիրություն և տեսաբանական վերլուծություն՝ հետազոտության գիտական-տեսաբանական հիմքերի մշակման համար:
- Հանրապետության դպրոցներում գործող մանկավարժական և միջնադարյան հայ մանրանկարիչների փորձի ուսումնասիրում, վերլուծություն և ընդհանուր եզրակացություն:
- Ուսումնական գործընթացի նպատակաուղղված դիտումներ, զրույցներ, հարցազրույցներ ուսուցիչների, սովորողների և ծնողների հետ:
- Սովորողների գեղանկարչական գիտելիքների, կատարողական և ստեղծագործական կարողությունների, հմտությունների ուսումնասիրություն՝ փորձարա.ական աշխատանքների հիմքով:
- Արձանագրող, ձևավորող և ստուգիչ-հավաստող փորձարարություններ:
- Ուսանողների (ապագա մանկավարժների) մատենական գեղանկարչական գործունեության արդյունքների ուսումնասիրություն և վերլուծություն՝ նոանց մասնագիտական կենսունակությունը որոշարկելու նպատակով:

- Մաթեմատիկական-վիճակագրական վերլուծություն:

Ատենախոսության մեջ դրական միտում է այն, որ նրանում լայնորեն ներկայացված են երկարատև փորձարարության արդյունքները, տեսականից բացի նաև իրազեկական նյութեր, աղյուսակներ, տրամագրեր, գծապատկերներ, պատկերազարդումներ, առարկայի դասավանդման ծրագիր, բազմաբնույթ առաջադրանքներ ու վարժություններ, ուսուցման հեղինակային մեթոդներ, տեխնիկաներ, տեխնոլոգիաներ: Դրանց համալիրը համոզիչ կերպով ցույց է տալիս առաջադրված գիտական դրույթների համապատասխանությունը, ակնառու կերպով լուսաբանում փորձարարության ընթացքը և նրա հիմնական արդյունքները, հաստատում գիտական ենթադրությունը: Անցկացված փորձարարության արդյունքում լուծված են առաջադրված բոլոր խնդիրները:

Ավելի հստակ՝

1. Բացահայտվել և հիմնավորվել են միջնադարյան Հայաստանի գեղարվեստական կրթօջախներում և համալսարաններում մատենական գեղանկարչության որպես ուսումնական առարկայի ձևավորման և զարգացման պատմական նախադրյալներն ու փուլերը (շրջաբաժանումը):
2. Սահմանվել և բնութագրվել են մատենական գեղանկարչության ուսուցման սկզբունքներն ու տեխնիկական-տեխնոլոգիական առանձնահատկությունները:
3. Որոշարկվել և սահմանվել են մանրանկարչական արվեստում սովորողների ընկալողական-վերարտադրողական, գծանկարչական, գեղանկարչական կատարողական տեխնիկական և ստեղծագործական կարողությունների գնահատման չափանիշները:
4. Բացահայտվել են գեղարվեստական կրթօջախներում մատենական գեղանկարչություն առարկայի՝ որպես աճող սերնդի գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության միջոցի դերն ու ընձեռած հնարավորությունները սովորողների գեղանկարչական և ստեղծագործական կարողությունների զարգացման գործում:
5. Սահմանվել են մատենական գեղանկարչության ուսուցման մշակված մեթոդիկայի արդյունավետ կիրառման մանկավարժական պայմանները:
6. Մշակվել է մատենական գեղանկարչության ուսուցման արդյունավետ մեթոդիկա, փորձարարությամբ ստուգվել ու հմնավորվել է նրա արդյունավետությունը:
7.Սահմանվել է մատենական գեղանկարչության ուսուցման գործընթացում Գեղարվեստական կրթության ֆակուլտետի սովորողների գեղարվեստաստեղծագործական զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները:

Առաջադրված խնդիրների լուծումը որոշարկել է հետազոտության գիտական նորույթը, նրա տեսական և գործնական արժեքը: Հատկապես հարկ է նշել, որ ամենից առաջ, խորը տեսաբանական վերլուծության ու փորձարարության հիմնախնդրի մշակման արդյունքում ատենախոսին հաջողվել է հաստատել մի շարք գիտական նոր իրողություններ, դրույթներ, որոնք սկզբունքորեն փոխում են գեղարվեստական կրթօջախներում կերպարվեստի դասավանդման մեթոդիկայի ռազմավարությունը:

Սովորողների գեղարվեստական կրթվածության ուսումնասիրման՝ ատենախոսի մշտական հստակ քայլերն ամրագրել են նրանց գեղարվեստագեղագիտական

իմացությունների, մանրանկարչական ունակությունների, հմտությունների զարգացման շարժընթացը և համապատասխան որակները գործունեության տվյալ ոլորտում: Որպես Լիլիթ Ամիրջանյանի ատենախոսության առանձնահատուկ դրական դրսևորում հարկ է նկատել նրա կողմից փիլիսոփայական, հոգեբանական, արվեստագիտական, մանկավարժական, մեթոդական գրականության խոր ուսումնասիրությունը, համոզիչ ու ինքնատիպ արդյունավետ մեթոդական համակարգի ստեղծումը:

Ատենախոսի հետազոտական աշխատանքի գիտական նորարությունն ու տեսաբանական արժեքն ամփոփվում է հայկական մատենական գեղանկարչության կրթական ծրագրերի իրագործման առանձնահատկությունների դրսևորմամբ՝ որպես անձի գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության միջոց: Սա պահանջում է խնդրի դիտարկում համապատասխան տեսանկյուններով, ինչը իրականացված է տվյալ հետազոտության մեջ:

Փորձարարության արդյունքների վերլուծությունն ու ամփոփումը վկայում են այն մասին, որ Լիլիթ Ամիրջանյանի մշակած մատենական գեղանկարչության մեթոդիկան արդյունավետ է դարձնում սովորողների գեղարվեստական գործունեությունը և այդ հիմքով նրանց հետ կրթական ծրագրերի իրագործումը և ապահովում է նրանց մանրանկարչական կատարողական և ստեղծագործական կարողությունների զարգացումը: Այստեղ ևս հեղինակը հիմք է ընդունել գիտական այն ճիշտ հիմնադրույթը, որ մատենական գեղանկարչության ծրագրերի իրականացումը չի կարելի կառուցել սոսկ կիբեռնետիկական սկզբունքով, որի հիմքում ընկած են զուտ ավանդական մեթոդները՝ գերազանցապես տեղեկատվության և նրա ծրագրավորման պահանջները:

Պատմագիտական, արվեստագիտական փաստարկների համոզիչ քննական վերլուծությունների միջոցով հեղինակը հանգում է գիտական ճիշտ եզրակացությունների, որ կերպարվեստի կրթական ծրագրերի իրագործումը հնարավոր է սովորողների ճանաչողական պահանջմունքների ըստ ամենայնի զարգացման, կրթական դրական դրդապատճառների, սովորողների գեղագիտական վերաբերմունքի ձևավորման նպատակաուղղված մեթոդների, անցյալի վարպետների փորձի օգտագործման, գիտելիքների կենսական նշանակության բացահայտման միջոցով: Այս բոլորի իրագործման համար հեղինակը առաջարկում է իր մշակած՝ անձի ուսումնահմացական և գեղարվեստական գործունեության ակտիվացման արդյունավետ պայմանների համակարգը, որի ընդհանուր դրույթները մեր կարծիքով կարող են նպաստել տարբեր տարիքի սովորողների գեղարվեստական գործունեության ըստ ամենայնի ակտիվացմանը և գեղարվեստական կրթության որակի բարձրացմանը:

Ատենախոսության ընդհանուր արժանիքներից պետք է նշել այն հանգամանքը, որ այն ավարտուն, ամբողջական և ժամանակակից հնչեղություն ունեցող աշխատանք է, որում դրսևորվել են հեղինակի ինչպես մեթոդաբանական, մեթոդական, այնպես էլ հոգեբանամանկավարժական, իմաստասիրական գիտելիքները, ինքնուրույն գիտահետազոտական աշխատանք կատարելու ունակությունները: Ատենախոսության հիմնական բովանդակությունն ամբողջովին արտացոլված է հեղինակի երկու տասնյակ

հրապարակումներում: Գիտական ինքնուրույն աշխատության բովանդակությունը համապատասխանում է ատենախոսության խորագրին:

Այս ամենով հանդերձ հարկ է նշել մեր դիտարկումները գրախոսվող ատենախոսության վերաբերյալ:

1.Մեծ թիվ են կազմում մեջբերումները, դրանց մեկնաբանությունները:

2.Ցանկալի կլիներ, որ ատենախոսության հեղինակը անդրադառնար նաև միջնադարյան մանրանկարչական և երաժշտական արվեստների փոխադարձ կապի գործոնին:

Նշված դիտարկումները ամենևին չեն նվազեցնում Լիլիթ Հրանտի Ամիրջանյանի ատենախոսության արժեքը և մեր ընդհանուր գերազանց գնահատականը:

Վերոշարադրյալը հնարավորություն է ընձեռում կատարել հետևյալ եզրահանգումը:

Լիլիթ Ամիրջանյանի «Մատենական գեղանկարչության ուսուցման մեթոդիկան գեղարվեստական կրթօջախներում» խորագրով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման ԺԳ.00.02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (կերպարվեստ) մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս, մ.գ.դ., պրոֆեսոր Յու.Վ. Յուզբաշյան

12.03.2024թ.

Յու. Յուզբաշյան ի ստորագրությունը
Հաստատում եմ
ի դիրքորոշման
Մասնիկ